

Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն՝ Ա. Միրզոյան

ԵՐԵՎԱՆԻ Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հ. 142 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ

2023–2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

Պ Լ Ա Ն

<<ԳԻՏԵԼԻՔԸ ԻՄԱՍՏ Է ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՁՈՒԼՎԵԼՈՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆԸ>>:

Դոսի

Գիտելիքը բարձր արժեք է: Մեր ժամանակներում բանիմաց, զարգացած անհատը դառնում է նաև հասարակության շարժիչ ուժ և ժամանակի վրա թողնում իր կենսարար ներգործությունը:

Կրթված քաղաքացին մեր ազգային արժանապատվության, մեր պետականության պահպանման, մեր երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոնն է, որի երաշխավորը հանդիսանում է ուսուցիչը:

Ավագ դպրոցի առաքելությունը առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ այն կրթության և ընդհանուր համակարգի բաղադրիչ մաս է՝ կոչված ապահովելու ինքնուրույն կյանքի համար շրջանավարտի պատրաստվածությունը, միաժամանակ հանդիսանալով միջանկյալ օղակ պարտադիր հիմնական և մասնագիտական կրթության միջև:

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է՝ արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով:

Կրթական համակարգն այսօր բոլորի ուշադրության կենտրոնում է:

Որակյալ և շարունակական կրթության ապահովումը դարձել է ինչպես անհատի, այնպես էլ պետության զարգացման, մրցունակության ապահովման և բարձրացման անհրաժեշտ հիմնաքարը: Որակյալ

ուսուցում ապահովելու համար մշակվում, փորձարկվում և օգտագործվում են ուսուցման տարբեր մեթոդներ, համակարգում կատարվում են բազմաթիվ փոփոխություններ, նորամուծություններ:

Կրթության բնագավառի բարեփոխումներն աճող սերնդի առջև դնում են նոր խնդիրներ , որոնք իրենց հերթին պահանջում են իրականացման աղյուսավետ եղանակներ և մեթոդներ: Բարեփոխումների և երկա փուլում կրթության նոր բովանդակությանն անցնելը, ուսուցման ժամանակակից և ավանդակա և մեթոդների գուգակցված կիրառումը հնարավորություն են ընձեռում ուսուցչին լավագույն ձևով իր ականացնելու դպրոցի առջև ծառացած խնդիրները:

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, արագընթաց փոփոխություններ են տեղի ունենում ողջ աշխարհում: Այդ փոփոխություններն ընդգրկել են ինչպես տնտեսական, քաղաքական, այնպես էլ ողջ կրթական և մշակութային ոլորտները և արդեն իրենց պահանջներն են դնում գիտության առջև՝ ակնկալելով անհապաղ և ճշգրիտ լուծումներ: Աստիճանաբար փոփոխության են ենթարկվում և վերանայվում շրջապատող իրականության վերաբերյալ մեր ընկալումները, որոնք ձգտում ենք համապատասխանեցնել կյանքի հարաճուն պահանջներին և արդիական լուծումներ տալ առաջադրվող խնդիրներին:

Այսօր մենք տեսնում ենք , որ այսօրվա աշակերտն ավել ակտիվ է ու ազատ, ավելի ինքնուրույն . նրա համար արդեն մերժել են հրամայական հեղինականպաշտական մեթոդները, սովորողն ուզում է բանավիճել, արտահայտել իր սեփական տեսակետն ու մտքերը, արգ փոփոխվող աշխարհում ճանաչել ինքն իրեն ու գտնել իր տեղը: Ուսուցիչն այլևս չի կարող սահմանափակվել միայն գիտելիք հաղորդողի պարտականությամբ: Եվ ընթացող հանրակրթական բարեփոխումների գլխավոր նպատակը, ակադեմիական իմացությունից գատ, սովորաղների մտածողության զարգացումն ու սոցիալական հմտությունների ձրավորումն է:

Այսօր կարևորվում է աշակերտակենտրոն ուսուցումը, որի հիմքում ընկած են դասավանդման նորագույն մեթոդները և մեթոդական հնարները, որոնք նպատակ ունեն սովորողների մեջ ձևավորելու ուսման նկատմամբ դրական վերաբերմունք և ապահովում են սովորողի ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին: Եթե նախկինում ուսուցման ընթացքում շեշտը դրվում էր հիմնականում գիտելիքի յուրացման և պարզ վերարտադրության վրա, ապա այսօր առավել կարևորվում է գիտելիքի յուրացման և կիրառման, գործնական հմտությունների ձեռքբերման կարողությունների զարգացումը: Նոր մոտեցումներն առաջնորդվում են մի կարևոր սկզբունքով՝ սովորել՝ կատարելով, սովորել՝ սովորեցնելով: Դա հնարավորություն կտա գիտելիքը դարձնել կիրառական, մեծացնել սովորողների հետաքրքրությունն ուսումնական նյութի նկատմամբ՝ միաժամանակ ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին:

Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումները նոր խնդիրներ են դնում ուսուցիչների առջև: Որքան էլ գնահատելի ու կիրառելի է անցյալի փորձը, միևնույնն է, փոփոխություններն անխուսափելի են: Հենց այս հանգամանքն էլ ենթադրում է, որ ուսուցիչը ժամանակին համաքայլ ընթանալու խնդիր ունի: Այո՛, կրթության որակի բարձրացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է մանկավարժներին:

Այսօր մեր սերունդն իր կյանքի ընթացքում ապրում է լրջագույն փոփոխություններ, և սա համարվում է կարևորագույն մարտահրավեր հասարակության, սոցիալ-տնտեսական գործընթացների և մարդու համար:

Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

Այո, կամա, թե ակամա իրական կյանքի ու դպրոցի միասնությունը դառնում է կրթության գլխավոր, հե նց կրթության բովանդակության մյուս բաղադրիչների՝ կարողություններ, հմտություններ և արժեքայի ն համակարգ բաղադրիչների վրա:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխա վոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրո ւթյան ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Ազգային դպրոցը պահանջում է ազգային դաստիարակություն, ինչը միակ ճանապարհն է, որ տանու մ է դեպի համամարդկային արժեքներ:

Բայց ազգային դպրոցի ոգին պահանջում է ավանդականի վերակառուցման կողքին հաշվի առնել նա և աշխարհի տարբեր երկրներում քննություն բռնած ուսուցման ու դաստիարակության առաջավոր ձ ներն ու մեթոդները:

20-

րդ դարի հայտնի ամերիկացի մանկավարժ Բենջամին Բլումը իմացական կամ ճանաչողության ոլոր տում առանձնացնում է 6 բաղադրիչ՝ գիտելիք, ըմբռնում ընկալում, կիրառում, վերլուծում, համադրու մ, գնահատում կամ արժեվորում:

Ժամանակակից կյանքին անհրաժեշտ են գիտելիքներով, կարողություններով, հմտություններով օժտ ված և արժեքային համակարգերի մեջ կողմնորոշվող անհատներ. պատրաստ՝ դիմակայելու ժամանա կի մարտահրավերներին, ունակ է՝ որոշակի իրավիճակներում լուծելու որոշակի խնդիրներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ Է

Հայաստանի Հանրապետությունն անցնում է պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման դժվարին ճանապարհ:

Կրթությունը պետության և անհատի շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է: Այն դիտվում է որպես երկրի զարգացման հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն ու երաշխիք: Պետությունն իր հիմնական գործառույթն է համարում կրթության բովանդակության ընդհանրական պահանջների և սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների՝ չափորոշիչների սահմանումը: Այդ մոտեցման վրա է հիմնված պետական կրթակարգը:

Կրթության դերն ազգի արժեքային համակարգի և ազգային ինքնության ձևավորման, պահպանման և զարգացման գործում անվիճելի է, իսկ ամուր արժեքային համակարգի վրա հիմնված ինքնությունն իր հերթին անհրաժեշտ է գլոբալացող աշխարհում չձուլվելու, հաջողության հասնելու և սեփական ներդրումն ունենալու համար: Մանկավարժությունը սրտի աշխատանք է, արյան ընթացք, որը կարող է կանգ չառնել դարերով, փոխանցվել սերնդեսերունդ՝ հետազօծելով նվիրյալների մի հոծ շառավիղ:

Հայ ուսուցիչը՝ մեր ազգային դիմագիծը հետևողականորեն հղկող հյուսնը և մատաղ հոգիների ճարտարապետը , բարձր գնահատանքի է արժանանում պետության կողմից:

Դպրոցն ունի մասնագիտական հզոր ներուժ,որն ի գորու է ինքը հարստացնել ՀՀ մանկավարժական գանձարանը:

Կիրթ և գրագետ սերունդ ունենալը պայմանավորված է դպրոցով:

Կրթությունը հայ ժողովրդի հարստությունն է:

Ուսուցիչը ապագա հասարակության մարդն է: Ուսուցչի մասնագիտության համար անթույլատրելի են կադապարները, ժամանակի պահանջներից ետ մնալը: Իրեն մանկավարժությանը նվիրաբերած մարդը պետք է

տիրապետի բոլոր այն հատկանիշներին, որոնք ցանկանում է տեսնել իր սաների մեջ: Ուսուցիչը պետք է լինի անհատականություն, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր անհատականության դաստիարակումը:

<<Չի կարելի միաժամանակ վատ մարդ, բայց և այնպես լավ հայ լինել, չի կարելի անկատար մարդ, բայց կատարյալ հայ լինել>>:

Դպրոցի կառավարման և առաջնորդման մակարդակը գերազանց է՝ շնորհիվ տնօրինության փորձառության և նպատակասլաց աշխատանքի: Թե՛ դեկավարությունը, թե՛ ուսուցչական կոլեկտիվը հստակ խնդիրներ ունեն բարձրացնել կրթության որակն ու արդյունավետությունը, խթանել աշակերտների առաջընթացը: Տնօրինությունը մշակել է գործողությունների հստակ ծրագիր, որն ուղղված է դպրոցի զարգացմանը, բարձր չափորոշիչների հաստատմանը: Տնօրենի, փոխտնօրենների և դասղեկների աշխատանքային պլանները բազմաբովանդակ են, հետաքրքրական և գործնական:

Բոլոր ուսուցիչները, դասղեկները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն կարգապահության հարցերին և աշխատանքային ռեժիմի խստիվ պահպանմանը:

Այս տարվա գլխավոր գերակայությունը և ամենակարևոր բովանդակային նախագիծը պետք է լինի<<Կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագիրը, որը իր մեջ ներառում է առաջիկա տարիների կրթության տեսլականը:

Տնօրինությունը աշակերտների ուսուցման և համակողմանի դաստիարակության գործընթացը ավելի արդյունավետ, դասապրոցեսը ավելի հետաքրքիր, բոլորի համար մատչելի դարձնելու և պատակով համախմբել էր բոլոր օղակների, հատկապես մեթոդափոխումների ջանքերը: Պարբերաբար ուսումնասիրվում է լավագույն, նորարար ուսուցիչների աշխատանքային փորձը և տարածվում: Շարունակաբար ուսումնասիրվում են կրթական չափորոշիչները և աշխատանքում առաջնորդվում դրանց պահանջներով:

Ակներև է դպրոցի կառավարման խորհրդի և տնօրինության համագործակցությունը: Դպրոցի գործունեությունը խորհրդի նիստերում ներկայացվում է պարզ ու թափանցիկ: Խորհուրդը լիարժեք իրականացրել է հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները, քննարկել և հաստատել է դպրոցի ոչ միայն ֆինանսատնտեսական գործունեությունը, այլ նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացը:

Կառավարման խորհուրդը սատարում է դպրոցին, քաջատեղյակ է դպրոցի անցուդարձին: Դպրոցի տնօրինության և կառավարման խորհրդի հարաբերությունների հիմքում դրված է փոխվստահությունը և թափանցիկությունը:

Մեծ տեղ է հատկացվում աշակերտների ինքնավարության զարգացման գործընթացին:

Աշակերտական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում մանկավարժական խորհրդի կողմից իրականացվող քննարկումներին: Աշակերտական խորհրդի անդամների կարծիքը և առաջարկությունները լրջորեն

քննարկվում են և հաշվի առնվում տնօրինության և ուսուցիչների կողմից: Աշակերտները սիրով են մասնակցում քաղաքային, տարածքային, հանրապետական բազմաբնույթ մրցույթներին, ստուգատեսներին, օլիմպիադաներին՝ նպաստելով դպրոցի վարկի բարձրացմանը:

Դպրոցում ներդրված է նոր մեթոդներ, հատկապես կիրառվում է համագործակցային մեթոդը:

Դպրոցից և հատկապես ուսուցչից մեծ ջանքեր են պահանջվելու բովանդակային նյութը դասարանին հարմարեցնելու և արդյունավետ կիրառելու համար: Դպրոցի ուսուցիչները լուրջ հետաքրքրություն են ցուցաբերում կրթական նորարարարական ծրագրերի հանդեպ, ցանկանում են աշխատել աշակերտակենտրոն, փոխհամագործակցային մեթոդներով:

Կրթության որակի բարելավման խնդիրը միշտ արդիական է:

Դպրոցի ուսուցիչներն ու ծնողները պատրաստակամ են իրենց ավանդը բերելու աշակերտների որակյալ կրթությունն ապահովելու գործին:

Այսօր առաջնահերթ են դառնում սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջները: Այսինքն՝ ուսուցչի առջև խնդիր է դրվում ոչ թե սուկդասագրքի նյութը հաղորդել, այլ այնպես սովորեցնել, որ արդյունքում աշակերտի պատրաստվածության մակարդակը համապատասխանի չափորոշչային պահանջներին:

Մտավոր կարողությունը մեր հարստությունն է, ինչը պետք է օգտակար լինի ոչ միայն մեր, այլև մեր ամբողջ պետության համար:

Հայտնի ճշմարտություն է, որ դպրոցը մարդկային գործունեության ոլորտի ամենակարևոր և, միաժամանակ, ամենապահպանողական օղակներից մեկն է: Տվյալ երկրի ապագան կանխորոշվում է դպրոցի հանդեպ ունեցած պետության և հասարակության վերաբերմունքով: Որն ապացուցվում է մեր աշակերտների հայրենասիրությամբ:

Ծագում է կրթության շարունակականության ապահովման համար համապատասխան հիմքերի և միջավայրի ստեղծման անհրաժեշտություն, որպեսզի մարդիկ հնարավորություն ունենան կրթվելու ողջ կյանքի ընթացքում:

Բովանդակային նոր քաղաքականությունը նախատեսում է այլընտրանքային ծրագրեր, դասագրքեր:

<<Հանրակրթության պետական կրթակարգում>> ավագ դպրոցը հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի ու աշխատանքի շուկա մտնելուն:

Իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են.

ա) ապահովելու որակյալ կրթություն

բ) բարձրացնելու հանրակրթության արդյունավետությունը

գ) կրթությունը դարձնելու արդիական և համապատասխանացնելու զարգացման պետական և միջազգային միտումներին.

Հանրակրթության պետական կրթակարգի հիմնական նպատակներն են.

ա/ կրթության որակի ապահովումը և հանրակրթական համակարգի համապատասխանեցումը պետական զարգացման ներկա միտումներին և միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

բ/ ստեղծել սովորողների համար նախընտրելի հոսքային ուղղության, այդ թվում, նախնական մասնագիտական կրթության ընտրության հնարավորություն:

Ուսուցումն ավագ դպրոցում, ունենալով մասնագիտական կողմնորոշվածություն, միաժամանակ ապահովում է հնարավոր ճկունություն, որովհետև սովորողներն իրենց հավակնությունների և նախասիրությունների փոփոխության, ինչպես նաև ուսուցման ընթացքի արդյունքներից ելնելով հնարավորություն ունենան վերակողմնորոշվելու: Նման ճկունություն ապահովելու նպատակով ավագ դպրոցում կրթության մասնագիտական շեշտվածությունը պետք է աճի աստիճանաբար՝ դասարանից դասարան:

Ավագ դպրոցում ամենաառաջնայինը ուստարվա ընթացքում առավել կարևորվել են աշակերտների ուսումնական գործունեության և ձեռքբերումների վերահսկումն ու գնահատումը:

Ժամանակին պարզվել է աշակերտների գիտելիքների ընկալման, իմաստավորման ու մտապահման, ընդհանրացման և համապատասխան գործողությունների համակարգման, գործնականում դրանց կիրառման հարցերը:

Որոշվել է յուրաքանչյուր աշակերտին տրվող անհատական առաջադրանքների բնույթը, կրկնակի բացատրվել է, լրացուցիչ մեկնաբանություններ է տրվել, փաստեր հաղորդվել, օգնել ճիշտ դատողությունների և եզրակացությունների հանգել միջոցների ընտրության հարցում: Այլ խոսքով՝ ստուգման արդյունքը հիմք է հանդիսացել ուսուցողական բնույթի աշխատանքների համար:

Այսպիսով, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն ուսուցչին հնարավորություն է տվել ոչ միայն փաստելու, թե ինչ է յուրացրել աշակերտը, ինչ կարողությունների է տիրապետում, այլև պարզելու թերությունն

երն ու դժվարությունները՝ դրանց վերացման հարցում աշակերտների հետ անհատական աշխատանք կազմակերպել ու նպատակով:

Ուսուցման գերակա նպատակն է դարձել դպրոցականի անձի զարգացումը, աշակերտի գիտելիքների ձեռքբերումները, որով և հաշվի է առնվում հետևյալ չափանիշները.

Առարկայական գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման որակը, դրանց համապատասխանությունը պետական առարկայական չափորոշիչների պահանջներին,

- զ դպրոցականի՝ ուսումնական գործունեության մեջ ներգրավվածության մակարդակը,
- զ մտածական գործընթացների զարգացման մակարդակը (կարդալու, վերլուծելու, համեմատելու, դասակարգելու, ընդհանրացնելու, մտքերը կապակցված շարադրելու, ուսումնական խնդիրը ստեղծագործաբար լուծելու և այլ կարողություններ):

Վերոհիշյալ չափանիշները՝ որպես ուսուցման- ուսումնառության արդյունք, գնահատվել են միավորային գնահատմամբ, իսկ իբրև ուսումնառության գործընթաց՝ բառային բնութագրումներով: Հատուկ ուշադրության արժանացնել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների և ինքնուրույնության մակարդակի մշտական դիտարկման դերի բարձրացումը:

Սովորողների ուսումնական ձեռքբերումները գնահատելիս առաջին հերթին հաշվի է առնվել նրանց հոգեբանական և առանձնահատկությունները՝ իրենց գործունեության աղյուսներն օբյեկտիվորեն գնահատելու անկարողությունը, ստուգման և ինքնաստուգման կարողության թույլ արտահայտվածությունը, ուսուցչի գնահատականի հանդեպ ոչ միանշանակ վերաբերմունքը և այլն: Գիտելիքների, հմտությունների և կարողությունների ցանկացած ստուգում

որոշում է ուսումնասիրված նյութի բնույթով, ինչպես նաև աշակերտի ընդհանուր զարգացման մակարդակով:

Ստուգման և գնահատման համակարգն ստանձնում է աշակերտի և ուսումնական միջավայրի հարաբերությունները խթանողի և կարգավորողի դեր:

Աշակերտը դարձել է ուսուցման գործընթացի լիիրավ մասնակիցը: Նա ոչ միայն պատրաստ է, այլև ձգտում է իր գիտելիքների ստուգման, փաստելու այն, ինչի հասել է և դեռ պետք է հաղթահարի այդ ճանապարհին:

Դպրոցը ամրագրել է կարևոր խնդիրներ.

- յուրաքանչյուր սովորողի ուսումնական ակտիվությունը,
- հայտորոշել ուսուցման ընթացքը և արդյունքները,
- շաղկապել ուսուցումն ուսումնառության հետ,
- ճշգրտել սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը,
- հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը,
- փոխադարձ կապ ապահովել սովորողի և նրա ծնողների հետ,
- վերահսկել ուսուցման գործընթացը և արդյունքները:
- իրականացնել 12-ամյա պարտադիր կրթություն

Ավարտվեց 2023-2024 ուսումնական տարին:

2023-2024 ուստարում Երևանի Ա. Ղարիբյանի անվան հ.

142 ավագ դպրոցում աշխատել են 30 ուսուցիչ՝ ավագ, միջին և երիտասարդ սերնդի: Բայց բոլորի առանցքը ավագ ուսուցիչներն են, ում գիտելիքներն ու առաջավոր փորձը փոխանցվում է երիտասարդներին: Հայտնի ճշմարտություն է, որ ամենուր ըմբռնումների բախում կա ավագների և երիտասարդների միջև, բայց մեր դպրոցում նրանց միջև միայն փոխըմբռնում է գործում: Երբ հնչում է դասի զանգը, դպրոցը հիշեցնում է մեղվաբնակարանի, որտեղ յուրաքանչյուրը ճանաչում է իր գործը և անշեղորեն կատարում այն:

Ժամանակակից մարդու ձևավորման ու զարգացման կարևոր պայման համարելով դաստիարակությունը՝ դպրոցը դարձել է իմացական, բարոյական, հայրենասիրական, գեղագիտական արժեքների դաստիարակության ամրակուռ դարբնոց:

Դպրոցը միասնական կոլեկտիվ է, ունի միասնական նպատակ, միասնական մտածողություն, համագործակցված աշխատանք, խղճի մտոք աշխատող ուսուցիչներ:

Դպրոցի առաքելությունը եղել և մնում է երեխային կրթելն ու դաստիարակելը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են նախարարության օրինակելի ուսպլան ներքի և ծրագրերի հիման վրա:

Ա. Ղարիբյանի անվան հ.142 ավագ դպրոցը 01.09.2009 թ. դարձել է ավագ դպրոց: Ավագ դպրոցի ուսուցիչները վերապատրաստվել են: Ուստարվա ընթացքում ատեստավորվել են 9 ուսուցիչ: Այժմ 3 ուսուցիչ վերապատրաստվում են:

Պայմանագիր է կնքվել դպրոցի և աշակերտների ծնողների միջև:

Յուրաքանչյուր աշակերտ ունի առաջադիմության թղթապանակ:

Հումանիտար հոսքի ավագ դպրոցում սովորողները հմտացել են բանասիրական, լեզվաբանական, ոճագիտական, տեքստաբանական ուսումնասիրություններ կատարելուն, սովորել են որոշակի թեմայի շուրջ նյութեր

որոնել ինչպես տպագիր, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով, դասդասել հավաքած նյութը, բանավոր հաղորդման կամ զեկուցման ձևով ներկայացնել լսարանի ուշադրությանը կամ էլ տպագրել դպրոցական պարբերականում: Այսինքն՝ գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու կարողություն է մշակվել:

Ավագ դպրոցի հումանիտար հոսքում շեշտադրվել է լեզվի արտահայտական և հաղորդակցական կողմը՝ հմտացել են անհրաժեշտ տեղեկություններով, լրացումներով և հիմնական դպրոցում անցածի կրկնությամբ: Դպրոցում մանկավարժական խորհրդի որոշմամբ հոսքային ծրագրերի առարկաներից X, XI դասարաններում սահմանվել է փոխադրական քննություններ:

2013թ. դպրոցը դարձել է ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություն:

Ներառական կրթությունը շատ ավելի լայն գաղափար է, որի հիմքում ընկած է ոչ թե կոնկրետ երեխայի կամ երեխաների խմբի կրթության իրավունքի ապահովումը, այլ յուրաքանչյուր երեխայի կրթական առանձնահատկություններ ի վրա հիմնված կրթություն ստանալու հիմնարար իրավունքի ապահովումը:

Կրթական տեխնոլոգիաները մուտք են գործել դպրոց (X-XI դասարաններն անցնում են ինֆորմատիկա առարկան): Համակարգչային դասարանում հեռուստացույցի և տեսաքննարկի միջոցով լուսաբանվել է դպրոցում կազմակերպված օրինակելի դասաժամերը, դաս-ցերեկոյթները: Վերապատրաստման միջոցով բարձրացվել է ուսուցիչների համակարգչային գրագիտությունը:

Դպրոցն <<Ինտերնետ>> կենտրոն է, ունի համակարգչային դասարան: Ինտերնետում տեղադրված է դպրոցի ինտերնետային կայքը: Դպրոցը մասնակցել է On-line ծրագրերին: Սլայդների տեսքով ստեղծվել է թեմաների դասավանդման ռեսուրսներ:

Ցեղասպանության, պետության և հայրենասիրության գաղափարների շուրջ ավագ դպրոցի աշակերտների հետ <<Հատուկ դաս>> են վարել ԵՊՀ-ի, Ոստիկանության Նոր Նորք բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Յու. Գասպարյանին:

Հատուկ դաս»-ի նպատակն էր, որ յուրաքանչյուր աշակերտ՝ ինչպես չմոռանալով անցյալը, լինելով հայրենասեր, իմանալով սեփական ժողովրդի

պատմությունն ու մշակույթը, նայի դեպի ապագան, փորձի հասկանալ մեր պետության զարգացումները և հարաբերությունները:

Կիրառվում է ժամանակակից ինքնագնահատման և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ:

Դպրոցն ունի էլեկտրոնային գրադարան: Ստեղծվել են ինտերնետ կայքեր:

Տնօրինությունը հատուկ ուշադրություն է դարձրել ներդպրոցական վերահսկողությանը, դասավանդման բովանդակությանը, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական աշխատանքների հետ կապված խնդիրներին:

Դպրոցի առաջադիմությունը 98% է, որակը՝ 47.1%:

ԵՊՀ միջհամալսարանական կրթության կենտրոնի հետ կնքվել է համաձայնագիր <<Կենտրոն>> և <<Դպրոց>> համատեղ համագործակցության մասին: ռազմական ակադեմիայի հետ ևս:

Ֆների միջոցով մեթոդական օգնություն է ցույց տրվել մանկավարժներին:

Կազմակերպվել են վերահսկողական տիպի դասալսումներ:

Ուստարվա ընթացքում տնօրինության կողմից լսվել է 287 դասաժամ:

Մանկավարժական խորհրդի նիստերում լսվել են հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության, ռուսաց լեզվի, անգլերենի, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ՆԶՊ և անվտ. կենսագործ., ֆիզկուլտուրայի դրվածքների ուսումնասիրությունների արդյունքները:

Ներդպրոցական օլիմպիադային մասնակցել են 45 աշակերտ, տարածքային՝ 12 և արժանացել վկայականների:

Դպրոցում ստեղծվել է <<Պատանի երկրապահ>> միությունը, որը համագործակցում է ԵԿՄ-ի հետ:

Դպրոցում գործում է աշակերտական խորհուրդ, որն ունի իր կառավարման մարմինը (նախագահ, վարչապետ, նախարարներ)

Դպրոցը ընդգրկվել է <<Dasaran.am>>, <<Մեդու>>, <<Կենգուրու>> ծրագրերի մեջ, համագործակցել <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ ՊՀ, Ֆրանսիայի <<Կապույտ խաչ>>, Հայկական <<Կարմիր խաչ>>, <<Մայկրոսոֆտ>>, <<Քրիստոնեական մշակութային ծառայություններ>> կազմակերպությունների հետ:

Ավարտվել է Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող, Կրթության բարելավումե վարկային ծրագրի 2-րդ փուլը շրջանակներում իրականացվող հիմնանորոգումը: Նոր ուսումնական տարին սկսում ենք նոր հիմնանորոգված դպրոցում:

Դպրոցում ուսումնական պլանների կատարմանը զուգընթաց, պարբերաբար կազմակերպվում են բաց դասեր, մ իջոցառումներ, հաշվետու համերգներ, մրցույթ-փառատոններ, ցուցահանդեսներ:

Դպրոցում կարևորվել է մայրենի լեզվի և գրականության դերը դպրոցականների կրթության, ազգային դաստիարակության, մարդու համակողմանի զարգացման խնդրում: Հայոց լեզուն ընդունելով <<Ազգային անվտանգության գործոն>>, <<Լեզվի պետական քաղաքականության ծրագիր>>՝ առանձնակի ուշադրություն է դարձվել հայոց լեզվի և գրականության դասավանդման դրվածքի բարելավմանը:

Դպրոցի տնօրինությունը օժանդակել է մայրենիի դրվածքի բարձրացման աշխատանքներին՝ մայրենիի դերը համարելով նաև ազգային արժանապատվության խնդիր:

Ուշադրության կենտրոնում են եղել թույլ առաջադիմություն ունեցող, հակահասարակական վարքագիծ դրսևորելու հակում ունեցող երեխաները:

Դասղեկները, տնօրինության անդամները ամենօրյա աշխատանք են կազմակերպել աշակերտների բացակայությունները կանխելու, նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Ապահովվել է դպրոցի և ծնողների, համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման համար:

Ուսումնական տարվա ընթացքում զգալի աշխատանք է կազմակերպվել արտադասարանական - արտադպրոցական աշխատանքները բարելավելու ուղղությամբ: Ավելի մեծ ուշադրություն է դարձվել միջոցառումների գաղափարական ուղղվածությանը և դաստիարակչական ներգործության ուժեղացմանը:

Կազմակերպվել է արդյունավետ համագործակցություն փորձառու և երիտասարդ մանկավարժների միջև:

Անցկացվել են առարկայական տասնօրյակներ, դաս-ցերեկույթներ, դասախոսություններ, զեկուցումներ, զրույցներ: Կազմակերպվել են էքսկուրսիաներ:

Դպրոցը 44 օրյա պատերազմի ընթացքում օգնություն է ցուցաբերել սահմանին կանգնած զինվորներին:

Դպրոցում բացվել է գողտրիկ անկյուն. <<Շնորհալիների աշխատանքները՝ սիրելի դպրոցին>>

Առանձնահատուկ ուշադրության են արժանացել մեթոդիավորումներում լաված ներքոհիշյալ զեկուցումները.

- <<Ավագ դպրոցի գործնական գրությունների ուսուցումը ինտերակտիվ մեթոդներով>>

- Թումանյանի <<Անուշ>> պոեմի ուսուցումը
- <<Շարադրությունների, փոխադրությունների ուսուցման մի քանի

կարևոր հարցեր >>

- <<Բանավոր խոսքի ուսուցում ավագ դպրոցում>>
- <<Ինտերակտիվ մեթոդների օտագործումը ավագ դպրոցի օտար լեզվի

դասավանդման պրոցեսում>>

- <<Կենսաինֆորմատիկան 21-րդ դարի մասնագիտություն>>
- Ավագ դպրոցում գրավոր խոսքի ուսուցումը որպես կապակցված

խոսքի զարգացման միջոց.

- <<Բառապաշարի հարստացումը հայոց լեզվի և գրականության ժամերին>>
- <<Հայկական մշակույթի զարգացումը 10-14-րդ դարերում>>
- <<Աշխարհաքաղաքականության գործոններ և ազգային շահեր>>
- <<Հրաբուխները հսկողության ներքո>>
- <<Անգլերեն լեզվի ընթերցանության հմտությունները ավագ դպրոցում>>
- <<Անգլերենի ասացվածքների և բառակապակցությունների իմաստը, ծագումը և գործածությունը >>
- <<Կելտական դիցաբանություն>>
- <<Система упражнений по усвоению форм ед. и мн. числа в связной речи>>
- <<Թվային հավասարություններ>>
- <<Իմ մայրենի լեզուն և օտար լեզուն>>
- <<Թեստեր և առաջադրանքներ ավագ դպրոցում>>
- <<Նոբելյան մրցանակակիր ֆիզիկոսները>>
- <<Հակաբիոտիկների դերը մեր կյանքում>>
- <<Գործնական տարաբնույթ խնդիրների լուծման մեթոդիկան>>
- <<Թունավոր կենդանիներ>>
- <<Ածխածնի նոր քիմիան>>
- <<Word-ը և իր հնարավորությունները>>
- <<Համակարգչային կախվածություն>> ,
- <<Հեղուկ բյուրեղները, նրանց հատկություններն ու կիրառությունները>>
- <<Մուտացիաներ>>
- <<Ջրի հետաքրքիր հատկությունները>>
- <<Սովորական կոտորակների հատկությունները և տասնորդական

- կոտորակները>>
- <<Ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքների որոնումը>>
- <<Երկրաչափության դպրոցական դասընթացի աքսիոմատիկական կառուցվածքը>>
- <<Նախդիրներ>>
- <<Ածանցյալի կիրառություն>>
- <<Պյութագորասի կյանքն ու գործունեությունը>>
- <<Հայկական հնագույն գիտակրթական հաստատությունները (VI-VIII դաս.) >>
- <<Գեղեցիկն իմ ընկալմամբ>>
- <<Լուսատու կենդանիներ>>
- Պատմականը և պատմականությունը <<Վերք Հայաստանի >> վեպում
- <<Հայաստանի թագավորանիստ ոստանները>>
- <<Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը>>
- <<Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանությունը>>
- <<Հայկական հարցի վերանայումը Պոտսդամի կոնֆերանսում>>
- <<Տակտի զգացողությունը հասուն լինելու նշան է>>
- <<Հայաստանը և հետարդյունաբերական հասարակությունը>>
- <<Մոնղոլները և Կիլիկյան Հայաստանը>>

- <<Այցելություն ՀՀ նախագահի նստավայր>>
- <<Այցելություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին>>
- <<Այցելություն Կենտրոնական բանկ>>
- Հայոց Մեծ Եղեռնի 103-րդ տարելիցի կապակցությամբ այցելություն
 - << Ծիծեռնակաբերդ>> հուշահամալիր

Անց են կացվել շարադրությունների մրցույթ.

- <<Մեր համայնքը>>
- <<Ես անկախ Հայաստանի քաղաքացի եմ>>
- <<Երևան իմ իղձերի քաղաք>>
- <<Մարդարապատից մինչև Արցախ>>
- <<Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք>
- <<Համայն հայերի մայրաքաղաքը>>
- <<Հայրենիքի իսկական պաշտպանը>>
- <<Ազատ, անկախ իմ Հայաստան>>
- <<Մենք հաղթանակի սերունդն ենք>>
- <<Հիշենք՝ ապրելու, արարելու համար>>

Անց են կացվել միջոցառումներ

Հայոց լեզու

- Հաղթանակած հայը
- Ազատ, անկախ Հայաստան
- <<Մեր ոսկեդենիկ հայոց լեզուն>>
- <<Թումանյանական օր>>
- <<Գրքի նվիրատվության օր>>
- <<Հայաստանն իմ տունն է, հայերենը՝ մայրենին>>
- <<Երբ կարդում եմ Շիրազ>>
- <<Արևին թիկնած, արևից շիկնած, արևահամ հայոց լեզու >>
- <<Նորից հնչում , դողանջում են հայոց դպրոցի զանգերը>>
- <<Անլռելի զանգակատան>> դողանջները Ծիծեռնակաբերդի

բարձունքում

- <<Անպարտելի է քո ոգին քաջ հայորդի>> խոնարումի տուրք Եռաբլուրում
- Հանդիպում
- <<Մայրամուտն... արևածագին կամ ապրելու իրավունք>> գրքի
- հեղինակ, հերոս և գեներալ Աստվածատուր Պետրոսյանի հետ
- Միջոցառում նվիրված զոհված ազատամարտիկներին. <<Արծվի թռիչք
- Էիք դուք>>
- <<Խոնարհվում եմ քո առաջ ուսուցիչ>>
- Բաֆֆու <<Սամվել>> վեպի քննարկում
- Գրական - երաժշտական ունկնդրում. <<Գողգոթայի ճանապարհին>>
- Դաս-ցերեկույթներ՝ Թումանյանի, Աբովյանի, Իսահակյանի, Չարենցի,
- Սևակի, Վ. Սարգսյանի տուն –թանգարաններում
- <<Մայիսյան հաղթանակների ոգին և Շուշիի ազատագրումը>>
- Ստեղծագործում են երեխաները. <<Գրական ծիլեր>>

Ռուսաց լեզու

- <<Высокая дружба двух народов>>
- <<Ради жизни на земле>>
- <<Իմ ուսուցիչ, իմ բարեկամ>>
- <<Դպրոցական աշուն>>
- << Ասացվածքներ և բառակապակցություններ>>
- <<Ճանապարհորդություն դեպի Ֆրանսիա >>
- <<Պոեզիայի միջազգային օրվան նվիրված միջոցառում>

Անգլերեն

- <<Արվեստը բուժում է>>
- <<Մենք ուսուցանում ենք անգլերեն>>

- <<Շեքսպիրը և համաշխարհային գրականությունը>>
- <<Հանրաճանաչ անգլիացիները>>
- <<Անգլիական ավանդույթներ և սովորույթներ>>
- <<Մեր հայրենիքը Հայաստանն է>>
- <<Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում>>

Մաթեմատիկա

- <<Բուրգեր>>
- <<Եռանկյունաչափական հավասարումներ>>
- <<Դասաժամերը բեմահարթակում >>
- <<Մաթեմատիկան և արվեստը>>
- <<Եռանկյունաչափական արտահայտությունների ձևափոխությունն

Պատմություն, աշխարհագրություն

- <<ՀՀ բնապահպանության և բնօգտագործման խնդիրները>>
- <<1826-1828 ռուս-պարսկական պատերազմը>>
- <<Մայիսը հաղթանակների ամիս է>>
- <<Մարդարապատի մեկդարյա դողանջները>>
- <<Հայերի դատը մարդկության դատն է>>
- <<Ցեղասպանությունը չարիք է>>
- <<Տիրոջն ընդառաջ >>
- <<Վարդանանց տոն>>
- Ֆիդայական երդում. <<Ով զարկվավ, դավաճան է>>
- <<Հնադարյան և հավերժ պատանի իմ Էրեբունի>>

- <<Տիդայիները հայ ազատագրական պայքարի հիմնասյուն>>
- <<Արցախյան ազատամարտի հերոսներ>>
- Պատմության քառուղիներով. Էքսկուրսիա Զվարթնոց, Սարդարապատ, Գառնի, Գեղարդ, Խոր Վիրապ
- <<ՀՀ խորհրդանիշները>>
- <<Հայաստանը ռուս-քեմալական հարաբերությունների ոլորտում>>

Քիմիա – կենսաբանություն

- <<Կենսաբազմազանություն>>
- <<Քիմիայի գիտունիկները>>
- <<Եզիպտոսի գաղտնիքները>>
- << [Հետաքրքրաշարժ քիմիա](#)>>

-

Էսթետիկա

գ

- <<Տյառնընդառաջ>>
- <<Երևանի օր>>
- <<Ձե՛զ տեսնենք, աղջիկներ>>
- Հայրենասիրական երգերի մրցույթ. <<Ես մի զարկն եմ քո բազկի>>
- Կավճանկարների մրցույթ <<Իմ կանաչ - կարմիր աշխարհը>>
- <Սպորտլանդիա>>

Աշխատանք է տարվել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսուցման տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման, պահպանման և ձեռքբերման ուղղությամբ:

Բարեկարգ վիճակում են պահվել դպրոցի շենքը, բակը, մարզահրապարակը:

Դպրոցի շենքի պահպանման և ուսումնանյութական բազայի հարստացման համար կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

Վերանորոգվել է բոլոր դասասենյակները:

Դպրոցը նախապատրաստական աշխատանք է կատարում 2020-2021 ուսումնական տարվա կապակցությամբ: Ամառվա ընթացքում շարունակվել են շինարարական աշխատանքները:

Ամփոփելով նախորդ ուսումնական տարվա արդյունքները՝ 2019-
2020 ուստարվա կատարած աշխատանքները գնահատել լավ, սահմանել բարելավման իրատեսական հասանելի խնդիրներ, որոնք կնպաստեն ազգային դպրոցի կայունացմանը, սովորողների ազգային դիմագծի ձևավորմանը:

<<Թանկ քեզանից ոչինչ չկա, մեր հայրենիք սիրելի>>

Խոսքեր կան՝ հնչում են, որպեսզի շարունակեն ապրել, դառնան գիտակցություն և կենսակերպ:

2023-2024 ուստարում դպրոցն ունի իր նպատակները, ինդիկները:
Դպրոցի նպատակը ուսուցանելն է և ուսանելը, բարոյական մարդասիրական բարձր հատկանիշներով օժտված քաղաքացիների կամ հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակումը: Ստեղծվել է փառքի սրահ՝ բարերարի կողմից

Նպատակները գործունեության բարելավման հիմքն են: Դպրոցի գործունեության բարելավման ջանքերը և պատակառուղիված են առաջին հերթին աշակերտների առաջադիմության բարձրացման և ազգային, համազգային արժեքների զուգակցմանը:

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի կարևորագույն ռազմավարական խնդիրն է:

Դաստիարակությունը ունի նպատակ ու խնդիրներ: Սույն նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կրթական համակարգում արմատավորել ժողովրդավարական հարաբերություններ, ուսուցման աշակերտակենտրոն մեթոդներ, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը կառուցել գործընկերային հիմքի վրա, մեծացնել դասի դաստիարակչական գործառույթությունը:

Կրթության բովանդակությունը հարստացնել անձի և քաղաքացու ձևավորմանը միտված ուսումնական նյութերով և դասընթացներով:

Երեխաների մոտ ձևավորել ինքնաճանաչողության, ինքնակառավարման և ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու, արդյունավետ հաղորդակցման, առողջ ապրելակերպի հմտություններ, պատասխանատու վարք:

Յ. 142 ավագ դպրոցն իր առջև խնդիր է դրել ապահովել ուսման պատշաճ որակ, հետևել սովորողների ուսման առաջադիմությանը:

Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

2023-2024

ուստարում դպրոցի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Ավագ դպրոցում երաշխավորվել են հումանիտար, բնագիտական, բնագիտամաթեմատիկական հոսքեր և ենթահոսքեր՝ լեզվաբանական, իրավաբանական, տնտեսագիտական, ֆիզմաթ, կենսաքիմիա(ֆիզիկա):

Դպրոցի առաքելությունը եղել և մնում է երեխային կրթելն ու դաստիարակելը:

Արագ փոփոխվող այս աշխարհում մեր անկախ հանրապետությունը՝ Հայաստան աշխարհը բռնել է աշխարհի զարգացումներին համընթաց քայլերու իր ճանապարհը:

Ազատ տնտեսական հարաբերությունները և ժողովրդավարությունն, անշուշտ, բերում են նաև սերնդի հոգեբանության, հետաքրքրությունների, ձգտումների, ակնկալիքների, պահանջմունքների, մտածողության փոփոխության:

Ուսուցումը պետք է ուղղվի դեպի սովորողը, դեպի նրա ճանաչողական կարողությունների ձևավորումը:

Չարգացած երկրների կրթական փորձը վկայում է, որ կրթության առջև ծառայած այս նոր խնդիրների լուծման ամենարդյունավետ ճանապարհը, եղանակը ուսուցչակենտրոն ուսուցումից աշակերտակենտրոն ուսուցման անցնելն է:

Այսօրվա սովորողին գիտելիքներից զատ հետաքրքրում է նաև, թե ինչպես իր կյանքն ավելի հետաքրքիր ու բովանդակալից դարձնի: Նա այլևս չի ուզում դասի ընթացքում զգաստ ու լուռ, միշտ կրավորական վիճակում լինել:

Ուսումնական պարապմունքները դպրոցում սկսվում են 2022թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում են 2023թ. մայիսի 24-ին՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ տասներորդից տասներկուերորդ դասարանների համար:

Գործող ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով կրթության գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարությունը առաջարկում է հնգօրյա ուսումնական շաբաթ տասներորդից տասներկուերորդ դասարանների համար /հանգստյան օր՝ շաբաթ և կիրակի/:

Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական պարտադիր բաղադրիչները ապահովում են պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված ուսումնական ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացումը: Սովորողների պատրաստվածության մակարդակը գնահատվում է ավագ դպրոցի ուսումնառության ավարտին /10-12-րդ դասարան/՝ քննություններով: Դպրոցում գործում է գնահատման 10-

միավորային համակարգ: Դասի տևողությունը սահմանվում է չափորոշիչով՝ 45 րոպե՝ անկախ դասարանների աշակերտների թվից: Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների, ամփոփիչ գնահատումը կատարվում է միայն կիսամյակներով և տարեկան:

12-րդ դասարանում առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական բոլոր թեմաների ուսումնասիրությունն

իրականացվում է առաջին կիսամյակում և կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ (պետական ավարտական քննությամբ):

12-

րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողն իր ընտրությամբ ուսումնասիրում է առնվազն երեք ուսումնական առարկա:

Այդ առարկաների կազմը ձևավորվում է Հաստատության 12-րդ դասարանի ուսումնական պլանի առարկայացանկից՝

ներառյալ սովորողի ընտրած միասնական քննական առարկաները:

, Հայոց լեզու և հայ գրականությունն միասնական քննական առարկան ընտրելու դեպքում սովորողն ուսումնասիրում է ուսումնական պլանով նախատեսված , <<Հայոց լեզու >>, ,<<Հայ գրականություն>>, իսկ <<Մաթեմատիկա>> առարկայի դեպքում՝, Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր և , <<Երկրաչափություն>> առարկաները:

12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի կողմից ընտրված առարկաների Հաստատության ուսումնական

պլանով նախատեսված ժամաքանակը տրվում է այդ առարկաների ուսումնական նյութի կրկնությամբ:

Բացառությամբ սովորողի կողմից ընտրված առարկաների, Հաստատության

12-րդ դասարանի ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաների ուսումնասիրությունն

ավարտվում է 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջում

Դպրոցում ուսումնադաստիրակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևը դասն է:

Հաճախ են փոփոխություններ լինում կրթական քաղաքականության մեջ, որը մեր ուսուցիչների և աշակերտների առջև նոր խնդիրներ է դնում:

Կարևոր է ասել, որ այսօր հանգամանալից մշակված և հիմնավորված են դպրոցի նպատակները.

ա/ ողջ կյանքի ընթացքում սովորելու պատրաստ գիտակցության ձևավորում,

բ/ուսուցման իրականացում ժողովրդավարական սկզբունքների ու փոխադարձ հարգանքի հիման վրա,

գ/ անձի՝ /սովորողի/ անընդհատ զարգացման ապահովում,

դ/ բազմաբնույթ գիտելիքների և հմտությունների աստիճանական ուսուցում:

Ինչպես տեսնում ենք դպրոցի նպատակներում առավել արժեվորված է սովորել սովորեցնելը՝ այն դարձնելով մարդու համար ցանկալի պահանջմունք և ժողովրդավարության հիմքերի ուսուցումը, որից հետո միայն գիտելիքների և այնպիսի հմտությունների ձևավորումը որոնք կնպաստեն անձի համակողմանի զարգացմանը: Ուսուցիչները աշակերտների մեջ փոքր հասակից պետք է մշակեն այնպիսի հայեցակարգային հզոր կարողություններ /որակներ/, որոնք կապահովեն

դեպի առանձին «առարկաների ոլորտներ» ներթափանցելու հմտություն, ինչպես նաև աշխարհը միասնության մեջ դիտելու, երևույթները փոխշաղկապել կարողանալու հմտություն:

Այդ գերորակները, արժեքները, որոնք ռազմավարական նշանակություն են ունենալու մարդու համար՝ նրա ողջ գիտակցական կյանքի ընթացքում, հիմնականում չորսն են. շփումը /կամ հաղորդակցումը/, հոգատարությունը /հետաքրքրությունը/, համայնքի զգացումը, ինչպես նաև շաղկապելու կարողությունը:

Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին՝ ձևավորելով դրանց համադրման և արժեվորման կարողություններ, նպաստել երեխաների արժեքային համակարգի ձևավորմանը՝ հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքերի վրա :

Անգլերենի խորացված ուսուցումը հիմք ընդունել և արդեն ձևավորված օտարալեզու մտածողությունը մայրենիին աստիճանաբար ներդաշնակել: Երբորդ օտար լեզու թուրքերեն և ֆրանսերեն:

Պայմաններ գեղագիտական և ստեղծել հոգևոր Երեխաների պահանջմունքների անձնային զարգացմանը, ճանաչողական, /արտադասարանական հաստատություններ/ և բնականոն աշխատանք, արտադպրոցական տարատեսակներն ու աշխարհագրությունը՝ ապահովելով կապը գործունեության համար՝ աստիճանաբար ընդլայնել դրանց ընտանիքի և հասարակական այլ կառույցների հետ :

Բարձրացնել և արդիականացնել մանկավարժների հոգեբանամանկավարժական պատրաստվածությունը:

Խթանել էթնոմանկավարժական և էթնոհոգեբանական հիմնարար և կիրառական հետազոտությունները:

Դպրոցում ուսուցման նպատակները հստակ են, համաձայնեցված: Դրանց մասին գիտեն ուսուցիչները, աշակերտները և ծնողները: Եվ մեր ուսուցիչները պարապում են այնքան, մինչև որ աշակերտը լիովին յուրացնի նյութը:

Աշակերտներին տրվում են պատասխանատվություն հանդես բերելու հնարավորություններ:

Ամեն աշակերտ կարող է սովորել և առաջադիմել: Մեր նպատակը պետք է լինի քաղաքացիներին կամ հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակում:

Մեր իրականության անգնահատելի արժեքն է դպրոցը, որը դիմացել է ժամանակի քննությանը և եկել, հասել է մեր օրերը:

Բոլորս միասին մեր պատանիների և երիտասարդների հոգիներում անթեղած պահենք սերն ու հպարտությունը մեր նախնիների ձեռքերով ստեղծած և ժառանգություն ստացած հայրենիքի հանդեպ:

2023-2024 ուստարում հիմք ընդունել և ապահովել հանրակրթության պետական կրթակարգի գործառույթները:

Կրթակարգի հիմնական գործառույթներն են՝

1. կրթության բնագավառում քաղաքականության միասնականության ապահովումը.

2. կրթության որակի բարելավման ապահովումը.

3. հանրակրթության իրականացման գործընթացում պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, հասարակության և անհատի հարաբերությունների կանոնակարգումը.

4. կրթության համապատասխանեցումը պետության և հասարակության առաջադրած խնդիրներին, անհատի պահանջմունքներին և միջազգայնորեն ընդունված չափանիշներին.

5. ՀՀ իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերի հաջորդա-կանության ապահովումը.

6. մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և իրականացման հիմքերի ստեղծումը:

Ապահովել հետևյալ գործառույթները.

1. Կրթական: Ուսուցիչը որոշում է սովորողի՝

- նյութի յուրացման մակարդակը,
- ձեռք բերած գիտելիքների կիրառման կարողությունը ծանոթ և անծանոթ իրավիճակներում,
- ուսումնական խնդիրների լուծման համար առավել նպատակահարմար միջոցների ընտրության կարողությունը,
- աշակերտի առաջընթացը, մտավոր գործողությունների զարգացման մակարդակը (վերլուծում, համադրում, համեմատում, ամփոփում),
- ձեռքբերումներն ու բացթողումները:

-
-

2 Դաստիարակչական: Գնահատման նոր համակարգն ունի ոչ միայն ստուգիչ, այլև ուսուցողական գործառույթ, ուսուցիչը հետևողականություն է դրսևորում ոչ միայն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նկատմամբ, այլև նրա անձնային որակների ձևավորման և զարգացման հարցերում: Ճիշտ կազմակերպված ստուգումը նվազեցնում է աշակերտների վախը, տազնապը ստուգողական աշխատանքների նկատմամբ, ձևավորում է ճշգրիտ նպատակադրումներ, կողմնորոշում ինքնուրույնության, ակտիվության, ինքնազնադատման հարցերում:

3. Սոցիալական: Պարզել յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումների համապատասխանության մակարդակը ծրագրային պահանջներին, ինչպես նաև աշակերտներին ու նրանց ծնողներին ծանոթացնել ուսուցման որակի

գնահատման չափանիշներին և ուղղություններին: Ստուգումը կարևորվում է այն հանգամանքով, որ հենվելով ստուգման արդյունքներին՝ կարելի է դիտարկել բոլոր այն գործոնները, որոնք կարող են ներգործել աշակերտի ուսումնաճանաչողական գործընթացի և կրթվածության մակարդակի վրա: Դա կօգնի նախանշել նրա անհատական հնարավորությունների զարգացման հեռանկարը:

Կրթական բարեփոխումները ժամանակի հրամայականով անդրադարձել են կրթության բնագավառի կառուցվածք ային բոլոր օղակներին ու կողմերին: Արդեն նկատելի տեղաշարժեր են նկատվել գրեթե բոլոր առարկաների ոլորտներում, առաջ են եկել նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան թե՛ հասարակական գիտակցության մեջ, թե՛ պետական քաղաքականության կրթությունը շարունակում է մնալ գերակայությունների շարքում, որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Կրթության ժամանակակից հրամայականներից մեկն այն է, որ աշակերտը կարողանա «ինչ-որ» գիտելիքի հիմքի վրա ձևավորել «ինչու» գիտելիքը: Փոխվել է նաև հմտությունների, կարողությունների ընկալումը:

Մարդը պետք է կարողանա կոնկրետ իրավիճակներում լուծել կոնկրետ խնդիրները:

Հանրակրթության պետական կրթակարգում ներառված են կրթական քաղաքականության հիմնական դրույթները, դաստիարակության, ուսուցման, ուսումնառության և գնահատման ընդհանուր սկզբունքները:

Գլխավոր նպատակը ձևավորված ավանդույթների զարգացմամբ որակյալ կրթության ապահովումն է:

Համաձայն կրթակարգի և ուսալանի միջնակարգ ընդհանուր կրթությունը իրականացվել է 12-ամյա տևողությամբ ավագ դպրոցում:

Առաջարկվող 3-ամյա ավագ դպրոցը հիմնականում կնպատակաուղղվի մասնագիտական կողմնորոշման և ընդունելության հարցերի լուծմանը՝ նվազեցնելով ռեպիտիտորության ազդեցությունը դպրոցի վրա:

Պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման գործընթացում առանձնահատուկ է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, որն ազգային արժեքների կրողն է:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հիմնահարցերին ուղղված քաղաքականությունը շարունակում է մնալ գերակա ուղղություն:

Կարևորագույն խնդիրներից է առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև սոցիալական ծանր վիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության և հասարակությունում նրանց ինտեգրման ապահովումը, բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրը ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան:

Պետք է գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ:

Կրթության քաղաքականության իրականացման, որակի և արդյունավետության ապահովման համար կարևոր դերակատարում ունի տնօրենը, փոխտնօրենները, առարկայական մասնախմբերի ղեկավարները, ուսուցիչները:

Դպրոցի վերահսկողությունը պետք է առաջին հերթին ապահովի փոխներգործուն դասավանդում և յուրացում, հոսքային ուսուցման կազմակերպումը՝ սովորողների հակումներին ու նախասիրություններին համապատասխան և կնախապատրաստի մասնագիտական կրթություն ստանալուն:

Կիզակետում պետք է լինեն ուսումնական գործընթացը և ուսուցիչների մասնագիտական զարգացումն ու աճը, կձևավորվի նախաձեռնությունը և նորարարությունը խրախուսող միջավայր:

Դասապրոցեսում կօգտագործվի ամերիկացի հայտնի հոգեբան Ալան Քոլինզի դասավանդման մեթոդների յոթ քայլերը.

1. Ֆրոնտալ դասավանդումից անցում փոքր խմբերի հետ աշխատանքի,
2. դասախոսությունից կամ տեղեկատվություն հաղորդելուց անցում դեպի կյուբն ինքնուրույն յուրացնելուն սովորողների օժանդակմանը,
3. անցում բոլոր աշակերտների հետ միաժամանակյա աշխատանքի,

4. սովորողների բանավոր և գրավոր աշխատանքների արդյունքների գնահատումից անցում ջանքերի գնահատման,
5. մրցակցությունից անցում դեպի համագործակցություն,
6. միօրինակությունից անցում բազմազանության,
7. անցում զուտ բառային մտածողությունից դեպի տեսողական ու բառային մտածողության ինտեգրմանը:

